ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՅԹԱՂ
ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
АЙТАХ

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, COMMUNITY OF HAYTAGH

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Հայթաղ, Մաշտոց 16
Հեռ. 098 15 00 24
Էլ. Փոստ՝ haytagh.armavir@mta.gov.am

24.12.2019թ.

N096

ՀՀ Արմավիրի մարզպետ
Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն Մաթևոսյան.

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի 10.12.2019թվականին կայացած ավագանու N7 նիստի որոշումները:

Առդիր՝ 22թերթ:

Համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 11-23383-2019
27 12 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N55

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին.

Որոշում է

1.Հաստատել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան		ստորագրություն	ստորագրություն
2. Ա.Արշակյան		ստորագրություն	ստորագրություն
3. Հ.Բալդասարյան		ստորագրություն	ստորագրություն
4. Ն.Գևորգյան		ստորագրություն	ստորագրություն
5. Գ.Մովսիսյան		ստորագրություն	ստորագրություն
6. Ա.Արշակյան		ստորագրություն	ստորագրություն
7. Ա.Կարապետյան		ստորագրություն	ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան		ստորագրություն	ստորագրություն

Համայնքի ղեկավարի ժամ. Ա.Գրիգորյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Հայթաղ համայնքի
ավագանու 10.12.2019թ
N7 նիստի N56 որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

56. Հայթաղ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:

57. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելու մասին:

58. Հայթաղ համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին:

59. Գումար հատկացնելու մասին:

60. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

61. Գումար հատկացնելու մասին:

62. Գումար հատկացնելու մասին:

63. Գումար հատկացնելու մասին:

/ Աշխատակազմի քարտուղարի
պաշտոնակատար Ա.Արշակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N56 10.12.2019թ

ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի , «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ,11-րդ,12-րդ և 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ Կ.Խտրյանի 2019թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 17/27.3/28546-19 գրությամբ պետական փորձագիտական եզրակացությունը՝ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի վարչական տարածքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0.5 գործակիցը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5. Գ.Մովսիսյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գրիգորյան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի
N7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 56 ՈՐՈՇՄԱՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. ***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքում սահմանվում են տեղական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝***

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի

ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն դրույքաչափերի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք-ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար տաս դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար վեց հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար տաս դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր տաս դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր տաս դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար հինգ հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար տաս դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր տաս դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար տաս դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր տաս դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր տաս դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար տաս դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազարի դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր տաս դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար տաս դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար տաս դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար տաս դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար տաս դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար տաս դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար տաս դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար տաս դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար տաս դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար տաս դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար տաս դրամ.

11) ավագակու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթհարյուր հիսուն դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հարյուր հիսուն հազար դրամ.

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար ՀՀ դրամ.

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ:

II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝

ա. բնակելի նշանակության շենքերում կենցաղային աղբի համար ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հարյուր դրամ,

բ. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

1) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

2) հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան Հայաստանի Հանրապետության դրամ,

3) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 5 Հայաստանի Հանրապետության դրամ,

4) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ յոթ ու կես Հայաստանի Հանրապետության դրամ.

գ. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն կետի 7-րդ ենթակետի բ/ պարբերությամբ սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

1) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ, կամ

2) ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

3) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին կամ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3.1. Սույն կետի 7-րդ ենթակետով սահմանված շենքերի, շինությունների և տարածքների մասով աղբի հեռացման հարաբերությունները կարգավորվում են աղբահանության ծառայություն մատուցող և ստացող կողմերի միջև կնքված պայմանագրով:

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝

ա.համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ յոթ հազար դրամ

բ. այլ համայնքի բնակիչ համարվող անձանց համար՝ յոթ հազար դրամ

գ.նպաստառու, միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամության կարգ ունեցող, մանկապարտեզ հաճախող երկուսից ավել երեխա ունեցող ընտանիքների համար՝ վեց հազար դրամ,

10) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով. երեք հազար դրամ (դաշնամուրային բաժնի հետ կից մեկ այլ բաժին հաճախելու դեպքում փոխհատուցման գումարը վճարել միայն մեկ բաժնի համար)

11) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար.

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով՝

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	0
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 1000 2000
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի 0 Խոշոր կենդանի 0
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	500
5	Ախտահանություն	1 քառ. մետր 100
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր 100
7	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելություն 1000
8	Արհեստական սերմնավորում	15000
9	Կենդանիների նախասպանդային զննում՝կախված կենդանու տեսակից	Մանր կենդանի 1000 Խոշորկենդանի 2000

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ *Ա. Արշակյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ N57 10.12.2019թ

ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է

1. Որոշել 2020թվականի հունվարի 1-ից հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ 300.0 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
2. Ա.Արշակյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
3. Հ.Բաղդասարյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
4. Ն.Գևորգյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
5. Գ.Մովսիսյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
6. Ա.Արշակյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
7. Ա.Կարապետյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____
8. Ժ. Սելբոնյան	_____	ստորագրություն _____	ստորագրություն _____

Համայնքի ղեկավարի ժ/ա Ա.Գոհգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ N6 ՆԻՍՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N 58

ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել << Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի ղեկավարի աշխատակազմի 2020թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ հաստաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
5. Գ.Մովսիսյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

Համայնքի ղեկավարի տեղակալ Ա.Գևորգյան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայթաղ համայնքի
ավագանու 10.12.2019թ
N7 նիստի N 58 որոշման

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ 6

ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2019թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)	2019թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Համայնքի ղեկավար		1	220.0	300.0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		1	150.0	210.0
3	Աշխատակազմի քարտուղար	1.2--1	1	160.0	200.0
4	Առաջատար մասնագետ	3.1--2	2	145.0	200.0
5	1-ին կարգի մասնագետ	3.2--1	1	135.0	180.0
6	2-րդ կարգի մասնագետ	3.3--2	2	125.0	170.0
7	Հավաքարար		1	80.0	100.0
8	Պահակ		2	100.0	120.0
12	Ընդամենը		11	1955.0	1480.0

h/h	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2019թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)	2020թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Մշակույթի տան տնօրեն		1	120.0	150.0
	Ընդամենը		1	120.0	150.0

հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնի ծածկագիրը	դրույքը	2019թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)	2020թ.-ին հաստատված դրույքաչափը (հազար դրամ)
1	Անասնաբույժ		0.5	38.0	46.309
	Ընդամենը		0.5	38.0	46.309

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

10.12. 2019թ

ՈՐՈՇՈՒՄ N59

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 13-րդ հոդվածի 10-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայթաղ համայնքում գործող պարի խումբ հաճախող երեխաներին միջոցառումների մասնակցելու մեկնելու համար տրամադրել ավտոբուս, որի համար համայնքի բյուջեից հատկացնել 55.0 /հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5. Գ.Մովսիսյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N60

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է

1. Հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությունը, թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից սոցիալապես անապահով մեկ ընտանիքի, ինչպես նաև Հայթաղ համայնքի մեկ նորածնի ընտանիքի տրամադրել 100.0 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____	ստորագրություն	ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____	ստորագրություն	ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____	ստորագրություն	ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____	ստորագրություն	ստորագրություն
5. Գ.Մովսիսյան	_____	ստորագրություն	ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____	ստորագրություն	ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____	ստորագրություն	ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____	ստորագրություն	ստորագրություն

Համայնքի ղեկավարի՝ Մ.Ս. Ա.Ամիգորյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
Կարգադրությամբ
ավագանու 10.12.2019թ
N7 արձանագրություն

ՑՈՒՑԱԿ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ

ՀՀ	Անուն ազգանուն	գումարի չափ	Անձնագրային տվյալներ
1	Ազարյան Վլադիմիր	50000	AN0289728

ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

ՀՀ	Անուն ազգանուն	գումարի չափ	Անձնագրային տվյալներ
1	Մուրադյան Սիփան	50000	AR0464492

Ընդամենը՝ 100.0 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N61

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Հայթաղ համայնքում գործող ֆուտբոլային թիմի պարապունքները ավելի արդյունավետ դարձնելու համար Հայթաղ համայնքի բյուջեից 62.0 / վաթսուն երկու հազար/ ՀՀ դրամ հատկացնել ֆուտբոլային կոներ գնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
2. Ա.Արշակյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
3. Հ.Բաղդասարյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
4. Ն.Գևորգյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
5. Գ.Մովսիսյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
6. Ա.Արշակյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
7. Ա.Կարապետյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____
8. Ժ.Մելքոնյան	_____	ստորագրություն_____	ստորագրություն_____

Համայնքի ղեկավարի ժ/պ Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՔԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱԿԱԳԱՆՈՒ N7 ԻՐԱՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N62

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը .

ԱԿԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1. Հայքաղ համայնքի գերեզմանների շրջակա տարածքը մաքրելու համար համայնքի բյուջեից դուրս գրել 170.0 / մեկ հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1. Ա.Ալեքսանյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5 . Գ.Մովսիսյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավարի ժ/ա Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՈՍԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ N7 ՆԻՍՏԻ

10.12.2019թ

ՈՐՈՇՈՒՄ N63

ԳՈՒՍԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայթաղ համայնքի բյուջեից 160.0 /մեկ հարյուր վաթսուն հազար/ հազար դրամ փոխանցել համայնքապետարանի, դպրոցի և բուժամբուլատորիայի համար տոնածառ՝ որ անանորյա աքսեսուարներով գնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՂԱՐԿՎԱԾ
1. Ա.Ալեքսանյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
2. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
3. Հ.Բաղդասարյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
4. Ն.Գևորգյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
5. Գ.Մովսիսյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
6. Ա.Արշակյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
7. Ա.Կարապետյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն
8. Ժ.Մելքոնյան	_____ ստորագրություն	_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Համայնքի ղեկավարի ժ/պ _____ Ա.Գրիգորյան